

ՊՍԱԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1959 թ. մարտի 20-ին, Էջմիածին քաղաքում: Ավագանի անունն է Ստեփան: 1976 թ. ավարտել է Էջմիածնի № 2 միջնակարգ դպրոցը և նույն տարում ընդունվել հոգևոր ճեմարան:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռնադրվել է սարկավագ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի կողմից:

1982 թ. հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը և հաջորդ տարվա մարտին պաշտպանել «Հայրապետական Աթոռի փոխադրությունը Սսից Էջմիածին 1441 թ.» թեմայով իր ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

Պսակ աբեղան իր աշխատակցությունն է բերում նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

1984 թ. օգոստոսի 1-ից Պսակ աբեղան աշխատում է Մայր Աթոռում՝ որպես պարետ և Վանաստան տնօրեն:

1983—1985 թթ. Պսակ աբեղան մասնակցել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանո-գերմանական բաժնի հայագիտական և լեզվաբանական որոշ առարկաների դասընթացներին՝ որպես ապատ ունկնդիր:

1985 թ. սեպտեմբերի 8-ին Մայր տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապայանի: